ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստի 29-ը սեպտեմբերի 2014թ.

Նախագահ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար Հ. Ս. Գասպարյան

Ներկա էին խորհրդի 7 անդամներ: Հրավիրվել էին նաև ամբիոնների դասախոսներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. *2014-15թթ. ուստարվա կուրսային աշխատանքների թեմաների հաստատում:*

   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/

2. *Ընթացիկ հարցեր:*

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում է Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ Մ. Ա. Զաքարյանը:

Նա ըստ ամբիոնների ներկայացրեց «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտության III կուրսի ուսումնական պլանով նախատեսված, նախապես կազմված և քննարկված կուրսային աշխատանքների թեմաները:

Թեմաները ղեկավարների կողմից կազմվել են անցած դասընթացների /տեսական, գործնական և լաբորատոր/ հիման վրա:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի վարիչի ժ/պ Ա. Վ. Ցուցուլյանը: Նա համակարծիք էր ներկայացված նյութին և առաջարկեց հաստատել:

Այնուհետև հանդես եկավ «Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների» ամբիոնի վարիչի ժ/պ Ռ. Ռ. Քամալյանը: Նա ևս հանդես եկավ կուրսային աշխատանքների թեմաների հաստատման վերաբերյալ առաջարկություններով և առաջարկեց հաստատել:

ՈՐՈՇՈՒՄ- 1. Հաստատել կուրսային աշխատանքների թեմաները:

2.Հաստատել կուրսային աշխատանքների կոնսուլտացիաների ժամանակացույցը:

3. Հանձնարարել ամբիոններին վերահսկել կուրսային աշխատանքների ղեկավարների և ուսանողների աշխատակարգը:

Օրակարգի երկրորդ հարցի մասին ֆակուլտետի խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը հանդես եկավ ներֆակուլտետային գործընթացի վերաբերյալ ընթացիկ հանձնարարականներով:

ՆԱԽԱԳԱՀ **Մ. Ա. ԶԱՔԱՐՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ **Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ**